# Բ ա ց ա տ ր ա գ ի ր

ՀՀ Ոստիկանության ճՈ Իջևանի ՀՔԲ-ի կապիտալ շինարարության նախագծի նախահաշվային փաստաթղթերը կազմված են շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների հիման վրա, որը որոշվում է համաձայն ՀՀ կառավարության 23.06.2011թ. N879-Ն որոշման հավելված N8-ի:

Նյութերի և սարքավորումների արժեքները ընդունված են համաձայն N10 ինֆորմացիոն տեղեկագրի, հրատարակված 2014թ. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության « Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից : Այն նյութերի արժեքները, որոնք չեն ներառված իֆորմացիոն տեղեկագրում, ձևավորվել են շուկայական միջինացված գների և հարցումների արդյունքում:

Նյութերի ծախսերը որոշված են ՇՆ և Կ-ի համապատասխան:

Համաձայն վերը նշված դրույթի նախահաշվային արժեքները որոշելիս ընդհանուր գների հիման վրա հաշվի են առնված հետևյալ գործակիցները.

1. Շինարարական նյութերի արժեքին տրված է՝
   - տրանսպորտային ծախսերը հաշվի առնող գործակից – 1.132
   - այլ նյութերի չափը հաշվի առնող գործակից – 1.05
   - պահեստային, փաթեթավորման ծախսերը հաշվի առնող գործակից – 1.02
2. Աշխատավարձի գործակից՝ - 1881.1
3. Մեքենաների շահագործման գործակից՝ - 2830.49
4. Վերադիր ծախսեր – 13.3%
5. Շահույթ – 11%
6. Ժամանակավոր կառույցների և շենքերի կառուցման արժեքը 1.2% հաստատված ՀՀ Քաղաքաշինության Նախարարության 21.08.2001թ. թիվ 69 հրամանով:
7. Ձմեռային պայմաններում կատարվող աշխատանքների համար լրացուցիչ ծախսերը 0.64% հաստատված ՀՀ Քաղաքաշինության Նախարարության 21.08.2001թ. թիվ 68 հրամանով:
8. Շինմոնտաժային աշխատանքների ավարտից հետո տարածքի մաքրման և գոյացած(ոչ ընթացիկ) աղբի տեղափոխման աշխատանքների ծախսեր- 0.15%
9. Տեխնիկական հսկողություն - 1.5%
10. Հեղինակային հսկողություն - 0.6%
11. Չնախատեսված աշխատանքներ և ծախսեր - 3 %

Ավելացված արժեքի հարկը հաշվի է առնված 20%:

Օբեկտի շինարարության ընդհանուր արժեքը կազմում է ***299998.4****հազ.դրամ*